

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-43 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետը, ինչպես նաև սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ, եթե սույն կետում և սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված գույքը չի հանդիսանում անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող (իրականացված) ձեռնարկատիրական գործունեության առարկա:»:

**Հոդված 2.** Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 17-րդ կետի տասնչորսերորդ պարբերությունում «և վարկային կազմակերպության» բառերը փոխարինել «, վարկային կազմակերպության և պետության ստեղծած հիմնադրամի» բառերով, իսկ «կամ վարկային կազմակերպության» բառերից հետո լրացնել «կամ պետության ստեղծած հիմնադրամի» բառերը.

2) 28-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) 33-րդ կետից հանել «ջրօգտագործողների ընկերությունների կողմից» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 35-րդ հոդվածում «անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց» բառերից հետո լրացնել «, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձանց» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ և երրորդ պարբերություններում «(վարկային կազմակերպությանը)» բառերից հետո լրացնել «կամ պետության ստեղծած հիմնադրամին» բառերը:

**Հոդված 5.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքի 15-րդ հոդվածի 28-րդ կետով նախատեսված ավելացված արժեքի հարկի արտոնությունից օգտվող հարկ վճարողները կնքված պայմանագրերի համաձայն շարունակում են օգտվել արտոնությունից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**